Հրանդ Նազարեանցի գործերը թարգմանած են եւրոպական լեզուներու, ինչպէս ինք հայերէնի վերածած էր եւրոպացի գործերու գործերը... 1920 թ. Հրանդ Նազարեանց իտալացի գրող Ռոբերտո Սարեագիի հետ կը խմբագրէ «Fantasma» գրական ամսագիրը, որու էջերու մէջ կը հրատարակէ Ռուբին Զարգարեանի, Ատոմ Եսրճանեանի (Միամանթօ), Դանիէլ Վարուժանի, Եղիա Տեմիրճիպաչեանի ու «ուրիշ շատ մը հին ու նոր հայ բանաստեղծներու եւ արձակագիրներու էջեր՝ կենսագրական ու գրախօսական նոթերով՝ ծանօթացներու համար, այսպէս, հայ միտքն ու հոգին իտալացիներուն»։ 1920 թ. իտալերէն թարգմանութեամբ կը հրատարակին Հրանդ Նազարեանցի երկու բանաստեղծական գրքերը՝ «Վահագն» խորագրով բանաստեղծութիւններու եւ պոէմներու ծաւալուն եւ հինգ մասէ՝ հինգ հատուածէ բաղկացած «Հայցին»։ Ի դէպ, երկու գիրքերու վրայ ալ իտալերէնէն առաջ բանաստեղծը պահպանած է հայերէն խորագիրը։ Անոնց կը յաջորդէ «Երեք պոէմ» եռամաս ծաւալուն գիրքը, շատ շքեղ հրատարակութեամբ, գեղեցիկ ձեւաւորումով, որ կը ներկայացնէ Նազարեանցի ծաւալուն երեք չափածոյ գործերը՝ «Մաւերներու արքայութիւնը», «Հոգի. գեղեցկութեան արշալոյսը» եւ «Նազարիէ. Սաադիի ծաղիկը», որը իտալերէնի թարգմանած է Չեզարէ Զարգիին։

Նազարեանցի յաջող գործերէն են «Տիեզերական ողբերգութեան մեծ երգը» (Il Grande Canto della Tragedie Cosmica), որը իտալերէնի թարգմանած է Enrico Cardile-էն։ Գալով անոր վերջին մեծածաւալ ստեղծագործութեան, «Խորհրդաւոր սիրոյ մեծ երգը» ընդհանուր խորագրով, կապած է բանաստեղծի անձնական կեանքի հանգամանքներու հետ եւ մնացած է անաւարտ։

Ինչպէս ըսինք, Իտալիոյ մէջ Նազարեանց ստեղծագործական աշխատանքի հետ միասին ծաւալած է նաեւ հայանպաստ ու ազգասիրական գործունէութիւն։ Իր ջանքերու եւ անձնական կապերու շնորհիւ՝ սենատոր Լուիջի Լուճադիի միջնորդութեամբ եւ Բիեմոնտէի իշխանուհիին հովանաւորութեամբ, Բարիի շրջակայքը ձիթենեաց դաշտերու մէջ տարագիր հայերուն փոքրիկ բնակավայր մը կը յատկացնէին նշանաւոր «Նոր Արաքս»-ը, ուր տարագիր հայերը, իբրեւ ապրուստի ու գոյատեւման միջոց,

Ներքոյ քերթողական...

ՎԱՐԱՆԳ

Բանաստեղծ-գրականագետ Հրանդ Նազարեանցին (Վախճանման 50-ամեակի առիթով)
Հայ բանաստեղծի խաչը շալակած՝
Դու անրջել ես... «խաչած երագներ»,
Հոգումդ յաճախ թախիծ, քչիկ՝ կայծ,
Եղել ես քերթող մարդ ազգանէր...

Դեռ հազիւ դառած պատանի, ջահել՝
Կործանել է քեզ սէրը Մանցիկի.
Թէկուզ կոչել են քեզ՝ հայ Մալարմէ,
Չերժ չես մնացել թրից, ստրակից-.

Քո իսկ սիրատուն գրչակիցների,
Որոնց հետ մի օր կազմել ես եթէ՛ր՝
Բանաստեղծութեան նոր գիսատղերից,
Որոնց «մահիկ»-ը արեամբ է ներկել։

.....
.....
Ապա փնտրել ես այլ
հորիզոններ,
Որ մարդը մարդուն
չօշոտի էլ.
Յաճախ գտել ես
փաղաքշող ծոցեր
Եւ նսանել ես հոգիներ ու
սէր...



...Չմայած նաեւ հալածել
է քեզ՝ յուշը Տիրանի,
մուծը Մաղէնի,
Բայց հաստատուել ես
Իտալիայում, ուր
«Քերթողը իրա՛ւ մարդու
կեանք կանի»։

Գրաւել է քեզ վայրն այդ գեղանի,
Առաւել՝ ազգն այդ հնամենի,
Որ գիտակցելով գինը երագիդ՝
Քեզ հասցրել է մինչ կատա՛ր Պառնասի։

...Սակայն, քանի որ եղել ես... խաչեա՛լ,
Ու միշտ է խաբել ցոլքը երագի,
Վիճակել է քեզ անկում մթացեալ
Ու մոռացութեան մշուշն անագնի։

...Սակայն, որքան էլ մաշկը պիրկ լինի
Նռան, հատիկներն քե՛ծ հասնելուն պէ՛ւ՝
Պատռում են կաշի, դառնում են գինի
Կամ յուլունքաշար՝ պսպղանքով վէս։

.....
.....
Վերադարձել ես՝ վերաթարմացա՛ծ,
Քերթումքիդ բոյրը ծաղկաստան է, հանդ.
Չմայած երգիդ էջն արեամբ է թաց,
Բայց ինքդ արդէ՛ն... արե՛ւ ես, Հրանդ։

պէտք է գրառնեմ գորգագործութեամբ։ Նազարեանցը վերակացու կը կարգուի այս գործին, սակայն այս ձեռնարկը, ի վերջոյ չի յաջողիր։ Բարի մէջ Նազարեանց իր կեցութիւնը կապահովէ զպրոցներու մէջ անգլերէն լեզու դասաւանդելով։ 1939-1945 թւականներուն ան Բարի քաղաքի ուսուցիչի մէջ կաշխատի որպէս խօսնակ ու թարգմանիչ։ Իտալիոյ մէջ Հրանդ Նազարեանց երկար ժամանակ եղած է գրական-մշակութային կեանքի կենտրոն՝ իր շուրջը հաւաքելով եւ համախմբելով իտալացի, ֆրանսիացի, գերմանացի, շեղացի, անգլիացի ու ամերիկացի գործիչներու ու գրական գործիչներ։ 1950-ական թւականներուն կը վարէ երկու կարեւոր գրական հանդէսներու տնօրէնութիւնը՝ «Graal» եւ «L'Eco del Parnaso»։ Կը խմբագրէ այդ ամսագիրը, որոնց աշխատակցած են տասնեակ ու տասնեակ ճանչցւած մտաւորականներ։ Այս տարիներուն ան կը նշանակուի Իտալիոյ ակադեմիայի անդամ եւ կը նշանակուի բանաստեղծութեան մասնաճիւղի նախագահ։ Իտալացի գրողներն ու բանաստեղծները զինք կը ներկայացնեն Շեւելակայն ակադեմիային՝ իբրեւ ժամանակ մրցանակի թեկնածու... Հրանդ Նազարեանցի մասին տեւեմանակ մեծ գովեստով խօսած է իտալական յայտնի «Treccani» հանրագիտարանը։

Հայագի մեծ մտաւորականը իր մահկանացուն կը կնքէ Բարի քաղաքի հիւանդանոցներէն մէկուն մէջ, 1962 թ. յունւարի 25-ին։

«Վատիկանի ճայնասփիլոս»

*) Հրանդ Նազարեանցը ծագումով իրանահայ էր. նա շառախիղմ էր դասական մեծ մտաւորական Ստեփանոս Նազարեանցի։

ՍՓԻՒՔ

Իրալահայ համայնքից նորոյթներ՝ ճրպ. Վ. Վարդանեանի ասուլիսով

Ոչ-հեռու անցելու «Ալիք»-ը նիւթեր է յանձնել յարգելի ընթերցողների ուշադրութեան իտալահայ համայնքի վերաբերեալ, ի մասնաւորի այնտեղ աշխատող «Չառիկ» կենտրոնի (կայքէջ) ուղղութեամբ, որի պատասխանատուն է հռոմաբնակ իրանահայ ճրպ. Վահէ Վարդանեանը: Իր թեմի անունով գտնուելու առիթով ունեցանք նորոյթներով յագեցած հարցազրոյց, որը ներկայացնում ենք ստորև:

Հ. - Յարգելի պրն. Վարդանեան, անցեալ տարի իտալացի մասնագէտ-ճարտարապետների հետ Իրանի հրա-վիրել-այցելելուց յետոյ, որին անդրադարձել ենք ժամանակին, ի՞նչ նորութիւն ունէք այս անգամ՝ մեզ համար:

Պ. - Շնորհակալութեամբ՝ ներկայ առիթի համար, պիտի յիշատակել, որ 2012 թ. յունւարի 25-ին տեղի ունեցաւ պաշտօնական հանդիպում-արարողութիւն՝ մասնակցութեամբ իտալահայ մշակութաբարեկամական միութիւնների, «Չառիկ» կենտրոնի, Իտալիայի հարաւում գտնուող Կազզա-մասիմա քաղաքի քաղաքապետ Դոմենինո Բինարդիի եւ նոյն քաղաքի մշակութային կցորդ Ֆրանչեսկո Լարիչչիայի: Այս արարողութիւնը կայացաւ ծագումով իրանահայ, Պոլսում ծնւած եւ Իտալիայում ապրած ու ստեղծագործած հռչակաւոր բանաստեղծ Հրանտ Նազարեանի մահան 50-ամեակի առիթով: Նա 1956 թ. ներկայացւեց Նոբէլեան

արժանացած այդ քերթողը կեանքի վերջին տարիներում բնակուած էր... դեռ-նախորդային նկուղում... յոյսի համար օգտուած ձիթածրագից, ապրում ցնցոտիներ մէջ՝ մոռացած ու լքած:

Հետագայում Իտալիայի պետութիւնը երկու նամակադրոշմ է տպագրել նրա գունաւոր նկարով:

Հ. - Ի՞նչ կասէիք Իտալիայի կողմից Յեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ տարւելիք աշխատանքների մասին:

Պ. - Այս հարցի պատասխանը վերադառնում է տարիներ առաջ այն իրողութիւններին: Ըստ Արա Ջարեանի, որի նկրթը «Ալիք»-ը լոյս է ընծայել վերջերս, Հայաստանը երախտապարտ է Իտալիայի խիզախ գաւազի Ջիակոմո Գորինիին, որը Հայոց Մեծ Եղեռնի տարիներում Տրապիզոնում հրապարտուած էր Իտալիայի եւ Երիտթուրքերի կազմակերպած զանգա-



«Նոան պարտէզ»-ում

մրցանակին՝ Իտալիայի կողմից, սակայն ընթացք չստացաւ՝ լինելով Պոլսում ծնւած իրանահայ:

Յիշատակենք, որ խորհրդային տարիներում Հրանտին մերժում էր նաեւ սովետահայ գրաքննադատութիւնը՝ նրա «սիմբոլիկ» դպրոցին պատկանելու համար. իսկ «սիմբոլիկ» գրական-գեղարեստական դպրոցը այդ երկար ու ձիգ տարիներում հաւասար էր... Ֆաշիզմին:

Բարեբախտաբար, վերջերս կրկին «յայտնաբերել» է նա Երեւանում եւ լոյս տեսել՝ Իւրի (Երևանդ) Սաչաթեանի ջանադրութեամբ:

Հ. - Անլիմ բացատրէք այս ուղղութեամբ:

Պ. - Այդ հանդիպում-արարողութեանը ներկայ էին նաեւ քաղաքացիներ՝ կուսակցութեանց ներկայացուցիչներ, ՀՀ հիւպատոսական ներկայացուցիչ Պիեդրօ Քուլուբեանը, Իտալիայի հայկական հաստատութեան ներկայացուցիչ պրոֆ. Պաշար Սիւսանյանն եւ նա՝ որպէս «Չառիկ» կենտրոնի ներկայացուցիչ:

Եռագոյն դրօշի յանձնումով (Հայաստանի Հանրապետութեան) մեկնարկեց քաղաքապետարանի շէնքի մօտակալքում կառուցւած Հրանտ Նազարեանի յուշակոթողի բացումը:

Քաղաքացիներն ու նրան մօտակից ճանաչողները երկրներ ունեցան այդ մեծ բանաստեղծի՝ վերաբերմունքի, կեցածքի եւ սովորութիւնների վերաբերեալ: Համաձայն նրանց՝ մի օր ողջ իտալացիների սիրոյն ու յարգանքին

ճային բռնագողթերի եւ սպանդի ակնատեսը: Այդ օրերում Ջիակոմո Գորինին ստիպւած (քաղաքական պատճառներով)՝ վերադառնում է Հայրենիք եւ տեղի «Իլ Մեսսէջեր» թերթին յանձնում Յեղասպանութեան մասին իր տեսած մանրամասն տեղեկութիւններն ու նկարագրութիւնները: 1918 թ. լոյս է տեսնում նրա վկայութիւնների «Մեմորիալ» վերտառութեամբ հատորը, որը հիմք դարձաւ Սեւրի, ժնեւի ու Լօզանի պայմանագրերի խմբագրման ժամանակ...:

Այսօր, փաստօրէն, Յեղասպանութեան ճանաչման պաշտօնական որոշում են ընդունել Իտալիայի շուրջ 40 քաղաքների, այդ թւում՝ Հռոմի, Միլանի, Ջենովայի, Ֆլորենցիայի, Պադովայի, Ռաւենայի, Բելլունոյի, Ուզինէի, Պադովայի, Վենետիկի, Բանիակալայի, Կամպոնոգարայի, Ֆայենցայի, Ֆելտրէի, Իմոլայի, Միրայի, Ասիագոյի քաղաքապետարանները, ինչպէս նաեւ՝ Իտալիայի քաղաքապետարանների ազգ. ընկերակցութիւնը եւ Լոմբարդիա նահանգի խորհուրդը: 1998 թ. Իտալիայի տարբեր հոսանքներ ներկայացնող 170 խորհրդարանականների կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման առաջարկ է ներկայացւել Իտալիայի խորհրդարանին: 2000 թ. Պատգ. խորհուրդը ակնառու մեծամասնութեամբ բանաձեւ է ընդունել Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ:

Ուստի՝ խորհրդարանական կառույցներ Իտալիայում, ինչպէս նաեւ պետական վարչակազմեր ու քաղաքապետարաններ, ճանաչել են 1915 թ. Մեծ Յեղասպանութեան անշրջանցելի եւ անժխտելի իրողութիւնը:


Մեր միջոցով, հայութեան եւ Իտալիայի բարեկամութեան միութիւնը եւ ուրիշ կառույցներ ու անհատներ, տարած աշխատանքների բերումով՝ Յեղասպանութեան պաշտօնապէս ճանաչումից բացի՝ որոշել է մշակութային ազգային փոխադարձ յարաբերութիւնների աճման ու զարգացման ի նպաստ՝ Կազզամասիմա քաղաքում, յարաւել եւ յատկապէս գործնական առումով՝ ի խնդիր ժամանակին Իտալիա գաղթած հայութեան պատմական յիշողութեան պահպանման եւ իբրեւ խաղաղութեան ու բարեկամութեան խորհրդանիշի՝ քաղաքում տեղադրել մի սիմբոլ, որը կոչւելու է «Նոան պարտէզ»:

Սոյն պրոյեկտի իրականացման համար առաջարկել է, որ ես, իբրեւ ճարտարապետ, քաղաքապետարանին ներկայացնեմ մի նախագիծ:

Հ. - Սի թիչ բացատրուի՞նք սուք «Նոան պարտէզ»-ի վերաբերեալ:

Պ. - Հա՛, չմոռանամ յիշատակել, որ Հրանտ Նազարեանից յիշատակի յաւերժացման համար՝ ի նկատի է առնել, նոյնպէս իրանահայ, հռչակաւոր բանաստեղծ Վարանդի «Ներքող քերթողական» քանդակը, որը ժամանակին գրւել է նրա մահան 50-ամեակի առիթով եւ այսպէս էլ կոչւել է՝ Da Varand a Hrand, alla sua 50 anniversario:

«Նոան պարտէզ»-ի համար ի նկատի է առնել Արարատ լեռը յիշեցնող մի ֆորմ պարտէզի կենտրոնում: «Նոան պարտէզ»-ի մէջ լինելու են զանազան սիմբոլներ, որոնք ցուցադրելու են՝ ազգային մշակոյթն ու պատմական արմատները:



Իտալիայի ժամանակի հանրապետութեան նախագահը, Վ. Վարդանեանի նորաձեռն պատկերում՝ մասնակազրոշմի թողարկման նպատակով

Նունենին ընտրւել է որպէս մի վաղեմի սիմբոլ, որն ընդունւած է եղել բոլոր կրօնների կողմից, ուրեմն՝ համարուած է գլխաւոր խորհրդանիշ: Կան քարէ սեւ բոլորակներ՝ կոթողի վրայ, որոնց վրայ քանդակւած են նունենի՝ կարմիրով: Կան 12 լուսարձակներ՝ դրա ծաւալուն մակերեսութեամբ, պարտէզի կենտրոնի մէջ, դրանց դիզին լոյսը յատակի սպիտակին ձուլւելիս՝ յիշեցնում է (Շար. 9-րդ էջում)

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ժնեւում բացւել է Հայոց Յեղասպանութեանը նւիրւած ցուցահանդէս

Սեպտեմբերի 2-ին ժնեւի էկումենիկ կենտրոնում բացւեց «Ձի Ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելուց էք» (Ղուկ. ԺԴ 19) խորագրով ցուցահանդէս՝ նւիրւած 20-րդ դարի առաջին Յեղասպանութեանը՝ Հայոց Մեծ Եղեռնին: Յուցահանդէսը կազմակերպել էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիւը եւ Հայաստանեան միջեկեղեցական բարեգործական կյոյր սեղանի հիմնադրամը՝ աջակցութեամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:

Նամակները: Որպէս խօսնակ՝ ցուցահանդէսի բացմանը հրաւիրւած էին Ֆրանսիայի հայոց թեմի Մարտէլլի եւ Հարաւային շրջանի առաջնորդական փոխանորդ



Թեմատիկ ցուցավաճանակների եւ գրքոյկի միջոցով այցելուներին ներկայացւեցին պատմական ամփոփ տեղեկութիւններ՝ Հայաստանի ու հայ ժողովրդի, յանուն հայրենիքի եւ հաւատքի հայոց դարաւոր մաքառումների մասին, Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ արխիւային վաւերագրեր եւ լուսանկարներ, համաշխարհային մամուլի էջերում



տպագրւած յղւածներ, Եղեռնը վերաբերած հայերի վկայութիւններ, Քրիստոնէական Եկեղեցիների պետերի գրութիւններ, Հայոց Յեղասպանութեանը ճանաչած եւ դատաւարած տարբեր պետութիւնների եւ միջազգային կազմակերպութիւնների յայտարարութիւններ:

Յուցահանդէսի նւիրւած տեղ են գտել նաեւ առաջին անգամ հրապարակուող արխիւային նկարներ, ինչպէս օրինակ՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքի

Տ. Մեսրոպ վրդ. Պարսամեանը եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխաւոր քարտուղարի տեղակալ դոկտ. Իզաբէլ Ապաւօ Փիրին:

Հայոց Յեղասպանութեանը նւիրւած նկարների ցուցադրութիւնը կը տեւի մինչեւ սեպտեմբերի վերջ եւ հետագայում կը կազմակերպուի նաեւ այլ երկրներում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին Տեղեկատուական համակարգ

ԼԻՐԱՆԱՆ

«Համազգային»-ի «Քնար» պարախումբը՝ Ինդոնեզիայում

«Ազրալ»-«Միդոզ» ոչ-կառավարական կազմակերպութեան հրաւերով «Համազգային»-ի «Քնար» պարախումբը օգոստոսի 4-ին Ինդոնեզիայում ներկայացրել էր Լիբանանը, մայրաքաղաք Ջակարտայի կից գտնուող «Անշլ փարք»-ում կայացած

վրացական, գնչուական եւ արաբական պարեր:

Հիւրընկալ կողմի բարձր հոգատարութեան եւ բժախնդիր ուշադրութեան արժանանալով՝ «Քնար»-ի երիտասարդները աւելի առոյգ եւ խանդավառ ներկայացումներով կա-



«Յետը»-ի տօնի առիթով կազմակերպւած փառատօնին:

րողացան հազարաւոր հանդիսատեսների գնահատանքին արժանանալ:

Տաս օրերի ընթացքում «Քնար» պարախումբը «Ֆանտաստիք գիւղը իստ չօ»-ի անւան տակ ներկայացրեց Լիբանանը եւ հրամրեց հայկական,

«Անշլ փարք»-ը հանգստի եւ փոքրերի գլարճանքի մի մեծ համալիր է, որը տարեկան 30 միլիոն այցելու է (Շար. 7-րդ էջում)

INCONTRO DEI DUE POETI TRA IRAN E
CASAMASSIMA A DISTANZA DI 50 ANNI
Sett 2013



Foto 1

Hrand Nazariantz Cittadino onorario del Comune di
Casamassima- Italia




Foto 2

Varand Sukias Kurkchian Prof.Letteratura Armena .Poeta •
giornalista del Giornale Alik Armeno di Tehran e il perito
deii'UNESCO

ՍՓԻՒՔ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՔ

Բարի քաղաքի խաչքարից յետոյ՝ Հայոց Յեղասպանութեան ճանաչում

Հայ-իտալական բարեկամութիւնը խորհրդանշող եւ Բարիւմ այս տարւայ յունւարի 11-ին խաչքար-կոթողի բացման առիթով «Ազգ» օրաթերթի յունւարի 30-ի համարում լոյս տեսած յղւածից յետոյ՝ Իտալիայի Պուլիա նահանգում անհանգիստ ու տագնապալի իրավիճակ է ստեղծւել: Խաչքարի բացման ու օժման պաշտօնական արարողութեան աւարտին, քաղաքապետարանի դահլիճում, Հոռոմում ՀՀ դեսպանութեան խորհրդա-

ղիւանագիտական երկխօսութեան վերջնական պարզաբանումը՝ Բարիի քաղաքապետարանը յստակ դիրքորոշում է դրսեւորել՝ ի նպաստ Հայոց Յեղասպանութեան ճանաչման ու դատապարտման: Այս դիրքորոշումը պատմական ամուր հիմքեր ունի Իտալիայում: Բաւական է մէկ անգամ եւս շեշտել, որ աշխարհի 17 երկրների խորհրդարաններից ու ԱՄՆ-ի 38 նահանգներից բացի՝ Յեղասպանութեան ճանաչման պաշտօնական որո-

շրջի կազմակերպած զանգւածային տեղահանման ու սպանդի ականատեսը: Առաջին համաշխարհայինի սկզբներում, երբ բախում էին Իտալիայի եւ Թուրքիայի շահերը, Ջիակոմո Գորիին ստիպւած՝ վերադառնում է հայրենիք եւ տեղի «Իլ Մեսսալերո» թերթին յանձնում Յեղասպանութեան մասին իր տեսած մանրամասն տեղեկութիւններն ու նկարագրութիւնները: Այնուհետեւ, 1918 թւականին, լոյս է տեսնում նրա վկայութիւնների «Մեմորիալ» վերնագրով հատորը, որը հիմք դարձաւ Սեբրի, Փնեւի ու Լօզանի պայմանագրերի խմբագրման ժամանակ: Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծումից անմիջապէս յետոյ Գորիին հրաւիրւում է Երեւան՝ որպէս Իտալիայի դեսպան, սակայն 1920 թւականին, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, նա ստիպւած՝ վերադառնում է Իտալիա՝ գնահատելով ստեղծած իրավիճակը՝ որպէս «պետական վաղանցիկ իրողութիւն»:

91 տարեկան հասակում դադարում է բաբախել նրա սիրտը, իսկ 2001 թւականին Գորիինի աճիւնի մասունքները տեղափոխուած են Երեւան եւ ամփոփուած Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի կողքին՝ «Յիշողու-










Վահէ Վարդանեան, Ռուբէն Թիմոտեան, Սիբել Էմիլիանօ եւ Հայր Լորենցօ

կան Բորիս Սահակեանին է յանձնւել Բարի քաղաքի իշխանութիւնների կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման մասին որոշման նախագիծը, որն արդէն հաստատւել է քաղաքապետարանի աւագանու կողմից եւ մօտ ապագայում պէտք է վաւերացի նախագահական խորհրդի կողմից: Այս առիթով Բարի քաղաքում Թուրքիայի հիւպատոսութիւնը քաղաքապետին բողոքի նոտա է ներկայացրել, որից յետոյ համացանցում տեղ են գտել այս որոշման քննարկմանն ու մեկնաբանութեանը վերաբերող բազմաթիւ նիւթեր, որոնցում քիչ չեն բազմաթիւ բանավէճերը:

Բարիի քաղաքապետ Միքելէ Էմիլիանօյն ուղղւած այն հարցին, թէ արդեօք տեղական կառավարման մարմինները չունեն իրենց քաղաքացիներին մտահոգող աւելի կարեւոր խնդիրներ, քաղաքապետը պատասխանել է, որ աւելի կարեւոր հարց չկայ, քան մէկուկէս միլիոն մարդկանց սպանող միայն այն բանի համար, որ նրանք ազգութեամբ հայ էին:

Ինչպէս հարցրել է իտալական «Լա Ռեպուբլիկա» թերթի փետրւարի 2-ի համարում տեղագրւած, «Բարիի քաղաքապետարան. Հայոց Յեղասպանութիւնը տեղի է ունեցել Թուրքիան հիմա փոխվրէժով սպառնում է» վերնագիրը կրող յղւածը (հեղինակներ՝ Սերենա Ռուսսօ եւ Վինչենցօ Քիււմարո) Հայոց Յեղասպանութեան ճանաչման լուրն առնելուն պէս՝ Իտալիայում Թուրքիայի դեսպան Հակիբ Ակիլը Բարիի քաղաքապետին նամակ է յղել՝ խորհուրդ տալով յետաձգել որոշման ընդունումը, որպէսզի թուրք-իտալական հիասքանչ յարաբերութիւնները չխաթարւեն: Գիււանագիտական բախումը հասունացել է այն աստիճանի, որ Թուրքիայի դեսպանը Բարիի քաղաքապետին խորհուրդ է տալիս չգործել այնպէս, ինչպէս դա անում են հայ համայնքի ներկայացուցիչները, որոնք փոխանակ իրենց ուժերը կենտրոնացնելու հնարաւոր դէպքերի իրականութեան գիտական ուսումնասիրութիւնների պարզաբանմանը՝ նախընտրում են որդեգրել որոշ քաղաքական ատեանների նախասիրութիւնը, որոնք յոյս ունեն ընտրապայքարի շրջանում ձայներ շահել: Մինչ այս



ՀՀ Գիտութիւնների ազգ. ակադեմիայի Լեզի ինստիտուտը եւ սիրիահայ մանկավարժները համագործակցում են

Երեւան, լրատուական ցանց - Հայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) Տեղեկատուական-վերլուծական կենտրոնից յայտնել են, որ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անվան լեզուի ինստիտուտը, Հայաստանի Սփիւռքի նախարարութեան աջակցութեամբ, սկսել է ուսումնասիրել սիրիահայ համայնքի լեզվական վիճակը:

Ինստիտուտի արեւմտահայերէնի նորարաց բաժինը նպատակ ունի դիտարկել արեւմտահայերէնի գործածուած իւրաքանչիւր իրողութիւնները՝ արտերկրի հայկական տարբեր հա-

մայնքներում, վեր հանել լեզուի զարգացման միտումները, նպաստել արեւմտահայերէնի կանոնակարգմանը, պահպանմանն ու զարգացմանը: Վերջերս Լեզուի ինստիտուտում սիրիահայ մանկավարժների հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում կողմերը համաձայնել են, որ մանկավարժները կաջակցեն Լեզուի ինստիտուտին՝ արդի արեւմտահայերէնի ուսումնասիրութեանը, իսկ ինստիտուտը մանկավարժներին կը ցուցաբերի գիտա-մեթոդական եւ լեզվական հարցերին առնչուող տարբեր թօսանդակութիւն:

Երեւանի «Մեր Սկրպչեան» արտիստական թատրոնում բեմադրւեց «Հայ ենք մենք» ներկայացումը

ՀՀ Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ Լիբանանի Հայ Կաթողիկէ Եկեղեցու «Սուրբ Խաչ-Հարպոյեան» վարժարանի աշակերտներից բաղկացած թատերախումբի կողմից Երեւանի «Մեր Սկրպչեան» արտիստական թատ-

վեցերորդ փուլի մասնակիցներ, ՀՀ Սփիւռքի նախարարութեան աշխատակիցներ:

Ողջունի խօսքով հանդէս եկաւ Լիբանանի Հայ Կաթողիկէ Եկեղեցու «Սուրբ Խաչ-Հարպոյեան» վարժարանի տնօրէն Ռիտա Պոյա-



րոնում բեմադրւեց «Հայ ենք մենք» ներկայացումը:

Թատերախումբը մասնակցում էր նաեւ «Արի տուն» ծրագրի վեցերորդ փուլին եւ հիւրընկալւել էր Հայ Կաթողիկէ Եկեղեցու Երեւանի հիւրասրահը:

Ներկայացումը երեք անգամ բեմադրւել է Բէյրութում, այն ներկայացնում է սփիւռքահայ երիտասարդի եւ երեւանցի աղջկայ սիրոյ խորհրդանշական պատմութիւն, որը երջանիկ աւարտ է ունենում եւ նրանք վառում են մի նոր հայեցի օջախ:

Ներկայացումը եկել էին դիտելու Հայաստանում գտնուող սիրահայեր, «Արի տուն» ծրագրի

ճանր: ՀՀ Սփիւռքի նախարարութեան Համահայկական ծրագրերի վարչութեան պետ Ատոմ Մխիթարեանը բարձր գնահատեց այն ներկայացումը եւ խմբի գործունէութիւնը, ովքեր Սփիւռքում վառ են պահում հայ մշակոյթի ջահը: Նա վստահութիւն յայտնեց, որ թատերախումբը յաջողութեամբ է շարունակելու իր գործունէութիւնը՝ պահպանելով ու զարգացնելով հայ թատերական արեստը՝ Լիբանանում:

Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարար Ռաիսա Գալստիան

թեան պատ» կոչւող տեղում:

Հայկական Հարցի ու Յեղասպանութեան համընդհանուր ճանաչման ու դատապարտման անդհաճատելի վստակ համար նրան շնորհւել է «Ճշմարիտ» հայերի համար» կոչումը: 1995 թւականին Ծիծեռնակաբերդի տարածքում Յեղասպանութեան թանգարանի տնօրէն Լաւրենտի Բարսեղեանի եւ Իտալիայում Հայերի համար ճշմարիտների կոմիտէի նախագահ, ՀՀ պատուոյ հիւպատոս Պիեղրօ Քուլուրեանի անմիջական ջանքերով ստեղծւեց ճշմարիտների այգին: 2008 թւականի հոկտեմբերի 5-ին Պաղովպոյում հանդիսաւոր արարողութեամբ բացւեց Աշխարհի ճշմարիտների այգին, որտեղ յիշատակուած են նաեւ Հայոց Յեղասպանութեան զոհերը:

Ի դէպ, Իտալիայում մեծ համբաւ է վայելում հայագիտական արդի, (Շար. 8-րդ էջում)

RASSEGNA del 11Settembre _ ALIK

<http://alikonline.ir/hy/news/social/item/777->

[-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%A6%D6%80%D5%B8%D5%B5%D6%81-%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AC%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%AB%D6%81-%D5%B6%D5%B8%D6%80%D5%B8%D5%B5%D5%A9%D5%B6%D5%A5%D6%80%D5%9D-%D5%B3%D6%80%D5%BF-%D5%BE-%D5%BE%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%BD%D5%B8%D5%BE](http://alikonline.ir/hy/news/social/item/777-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%A6%D6%80%D5%B8%D5%B5%D6%81-%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AC%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%AB%D6%81-%D5%B6%D5%B8%D6%80%D5%B8%D5%B5%D5%A9%D5%B6%D5%A5%D6%80%D5%9D-%D5%B3%D6%80%D5%BF-%D5%BE-%D5%BE%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%BD%D5%B8%D5%BE)

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ - Իտալահայ համայնքից Նորոյթներ՝ ճրտ. Վ. Վարդանեանի ասուլիսով Չորեքշաբթի, 11 Սեպտեմբերի 2013 07:10



Ոչ-հեռու անցելով «Ալիք»-ը նիւթեր է յանձնել յարգելի ընթերցողների ուշադրութեան իտալահայ համայնքի վերաբերեալ, ի մասնաւորի այնտեղ աշխատող «Չատիկ» կենտրոնի (կայքէջ) ուղղութեամբ, որի պատասխանատուն է հռոմաբնակ իրանահայ ճրտ. Վահէ Վարդանեանը: Իր թեիրանում գտնւելու առիթով ունեցանք նորոյթներով յագեցած հարցազրոյց, որը ներկայացնում ենք ստորեւ:

Ոչ-հեռու անցելով «Ալիք»-ը նիւթեր է յանձնել յարգելի ընթերցողների ուշադրութեան իտալահայ համայնքի վերաբերեալ, ի մասնաւորի այնտեղ աշխատող «Չատիկ» կենտրոնի (կայքէջ) ուղղութեամբ, որի պատասխանատուն է հռոմաբնակ իրանահայ ճրտ. Վահէ Վարդանեանը: Իր թեիրանում գտնւելու առիթով ունեցանք նորոյթներով յագեցած հարցազրոյց, որը ներկայացնում ենք ստորեւ:

Յ.- Յարգելի պրն. Վարդանեսան, անցեալ տարի իտալացի մասնագետ-ճարտարապետների հետ հրան հրակիրուել-այցելելուց յետոյ, որին անդրադարձել ենք ժամանակին, ի՞նչ նորութիւն ունէք այս անգամ՝ մեզ համար:

Պ.- Ընտրականութեամբ՝ ներկայ առիթի համար, պիտի յիշատակել, որ 2012 թ. յունւարի 25-ին տեղի ունեցաւ պաշտօնական հանդիպում-արարողութիւն՝ մասնակցութեամբ իտալահայ մշակութա-բարեկամական միութիւնների, «Չատիկ» կենտրոնի, Իտալիայի հարաւում գտնուող Կազզամասիմա քաղաքի քաղաքապետ Դոմենիսօ Բինարդիի եւ Նոյն քաղաքի մշակութային կցորդ Ֆրանչեսկօ Լարիչչիայի: Այս արարողութիւնը կայացաւ ծագումով իրանահայ, Պոլսում ծնւած եւ Իտալիայում ապրած ու ստեղծագործած հռչակաւոր բանաստեղծ Յրանտ Նազարեանցի մահւան 50-ամեակի առիթով: Նա 1956 թ. ներկայացւեց Նոբելեան մրցանակին՝ Իտալիայի կողմից, սակայն ընթացք չստացաւ՝ լինելով Պոլսում ծնւած իրանահայ: Յիշատակենք, որ խորհրդային տարիներում Յրանտին մերժում էր նաեւ սովետահայ գրաքննադատութիւնը՝ նրա «սիմուլիկ» դպրոցին պատկանելու համար. իսկ «սիմուլիկ» գրական- գեղարւեստական դպրոցը այդ երկար ու ձիգ տարիներում հաւասար էր... Ֆաշիզմին: Բարեբախտաբար, վերջերս կրկին «յայտնաբերել» է նա երեւանում եւ լոյս տեսել՝ Իւրի (Երւանդ) Խաչատրեանի ջանադրութեամբ:



«ՆՈՒԱՆ ԱՊԱՐՏԵԳ»-ՈՒՆ

Յ.- Աւելին բացատրէք այս ուղղութեամբ:

Պ.- Այդ հանդիպում-արարողութեանը ներկայ էին նաեւ քաղաքացիներ՝ կուսակցութեանց ներկայացուցիչներ, ՀՀ հիւպատոսական ներկայացուցիչ Պիեդրօ Քուչուքեանը, Իտալիայի հայկական հաստատութեան ներկայացուցիչ պրոֆ. Պայքար Սիւսպեանսն ու ես՝ որպէս

«Չատիկ»

Կենտրոնի

Ներկայացուցիչ:

եռագոյն դրօշի յանձնումով (Հայաստանի Հանրապետութեան)՝ մեկնարկեց քաղաքապետարանի շէնքի մօտակայքում կառուցւած Հրանտ Նազարեանցի յուշակոթողի բացումը: Քաղաքացիներն ու նրան մօտկից ճանաչողները ելոյթներ ունեցան այդ մեծ բանաստեղծի՝ վերաբերմունքի, կեցածքի եւ սովորութիւնների վերաբերեալ: Համաձայն նրանց՝ մի օր ողջ իտալացիների սիրոյն ու յարգանքին արժանացած այդ քերթողը կեանքի վերջին տարիներում բնակւում էր... գետնափորային նկուղում, լոյսի համար օգտւում ձիթածրագից, ապրում ցնցոտիների մէջ՝ մոռացւած ու լքւած: Հետագայում Իտալիայի պետութիւնը երկու Նամակադրոշմ է տպագրել նրա գունաւոր նկարով:

3.- Ի՞նչ կասէիք Իտալիայի կողմից Յեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ տարւելիք աշխատանքների մասին:

Պ.- Այս հարցի պատասխանը վերադառնում է տարիներ առաջւայ իրողութիւններին: Ըստ Արա Չարեանի, որի նկիւք «Ալիք»-ը լոյս է ընծայել վերջերս, Հայաստանը երախտապարտ է Իտալիայի խիզախ զաւակ Ջիակոմո Գորինիին, որը Հայոց Մեծ Եղեռնի տարիներում Տրապիզոնում հիւպատոսն էր Իտալիայի եւ Երիտթուրքերի կազմակերպած զանգւածային բռնագաղթերի եւ սպանդի ականատեսը: Այդ օրերում Ջիակոմո Գորինին ստիպւած (քաղաքական պատճառներով)՝ վերադառնում է հայրենիք եւ տեղի «Իլ Մեսաջերօ» թերթին յանձնում Յեղասպանութեան մասին իր տեսած մանրամասն տեղեկութիւններն ու նկարագրութիւնները: 1918 թ. լոյս է տեսնում նրա վկայութիւնների «Մեմորիալէ» վերտառութեամբ հատորը, որը հիմք դարձաւ Սելրի, Ժնեւի ու Լօզանի պայմանագրերի խմբագրման ժամանակ...:



Իտալիայի ժամանակի հանրապետութեան նախագահը, Վ. Վարդանեանի նորաոճ պատկերում ճամակադրոշմի թողարկման նպատակով

Այսօր, փաստօրէն, Յեղասպանութեան ճանաչման

պաշտօնական որոշում են ընդունել Իտալիայի շուրջ 40 քաղաքների, այդ թւում՝ Յոմի, Միլանի, Ջենովայի, Ֆլորենցիայի, Պադովայի, Ռաւենայի, Բելլունոյի, Ուդինէի, Պադովայի, Վենետիկի, Բանիակաւալլոյի, Կամպոնոգարայի, Ֆայենցայի, Ֆելտրէի, Իմոլայի, Միրայի, Ասիագոյի քաղաքապետարանները, ինչպէս նաեւ՝ Իտալիայի քաղաքապետարանների ազգ. ընկերակցութիւնը եւ Լոմբարդիա նահանգի խորհուրդը: 1998 թ. Իտալիայի տարբեր հոսանքներ ներկայացնող 170 խորհրդարանականների կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման առաջարկ է ներկայացւել Իտալիայի խորհրդարանին: 2000 թ. Պատգ. խորհուրդը ակնառու

մեծամասնությամբ բանաձեւ է ընդունել Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ: Ուստի՝ խորհրդարանական կառոյցներ հտալիայում, ինչպէս նաեւ պետական վարչակազմեր ու քաղաքապետարաններ, ճանաչել են 1915 թ. Մեծ Յեղասպանութեան անշրջանցելի եւ անժխտելի իրողութիւնը:

Մեր միջոցով,- հայութեան եւ հտալիայի բարեկամութեան միութիւն եւ ուրիշ կառոյցներ ու անհատներ,- տարած աշխատանքների բերումով՝ Յեղասպանութեան պաշտօնապէս ճանաչումից բացի՝ որոշել է մշակութային ազգային փոխադարձ յարաբերութիւնների աճման ու զարգացման ի նպաստ՝ Կազգամասիմա քաղաքում, յարատեւ եւ յատկապէս գործնական առումով՝ ի խնդիր ժամանակին հտալիա գաղթած հայութեան պատմական յիշողութեան պահպանման եւ իբրեւ խաղաղութեան ու բարեկամութեան խորհրդանիշի՝ քաղաքում տեղադրւի մի սիմուլ, որը կոչւելու է «Նռան պարտեզ»:

Սոյն պրոյեկտի իրականացման համար առաջարկւել է, որ ես, իբրեւ ճարտարապետ, քաղաքապետարանին ներկայացնեմ մի նախագիծ:

Յ.- Մի քիչ բացատրութիւն տւէք «Նռան պարտեզ»-ի վերաբերեալ:
Պ.- Հա՛, չմոռանամ յիշատակել, որ Հրանտ Նազարեանցի յիշատակի յաւերժացման համար՝ ի նկատի է առնւել, Նոյնպէս իրանահայ, հռչակաւոր բանաստեղծ Վարանդի «Ներքող քերթողական» քանդակը, որը ժամանակին գրւել է նրա մահւան 50-ամեակի առիթով եւ այսպէս էլ կոչւել է՝ Da Varand a Hrand, alla sua 50 anniversario:
«Նռան պարտեզ»-ի համար ի նկատի է առնւել Արարատ լեռը յիշեցնող մի ֆորմ՝ պարտեզի կենտրոնում: «Նռան պարտեզ»-ի մէջ լինելու են զանազան սիմուլներ, որոնք ցուցադրելու են՝ ազգային մշակոյթն ու պատմական արմատները:
Նռնենին ընտրւել է որպէս մի վաղեմի սիմուլ, որն ընդունւած է եղել բոլոր կրօնների կողմից, ուրեմն՝ համարուում է գլխաւոր խորհրդանիշ: Կան քարե սեւ բոլորակներ՝ կոթողի վրայ, որոնց վրայ քանդակւած են Նռներ՝ կարմիրով: Կան 12 լուսարձակներ՝ դրա ծաւալուն մակերեւոյթում, պարտեզի կենտրոնի մէջ, դրանց դեղին լոյսը յատակի սպիտակին ձուլւելիս՝ յիշեցնում է Մասիս սարն ու դրա ձիւնը, ինչու չէ նաեւ յաւերժական կրակը հայութեան՝ ճիծեռնա-կաբերդի պէս: Կրկնութիւնից հեռու մնալու համար՝ աշխատել ենք կիրարկել Նոր շունչ ստեղծող տարրեր՝ կրակ, Նուռ եւ բանաստեղծութիւն, լեռ ու այլ խորհրդանիշեր եւ սիմուլներ: Ծնորհակալութիւն ենք յայտնում Ձեզ, պրն. Վարդանեան եւ յուսով ենք՝ միշտ յաջող լինէք Ձեր գործունեութեան մէջ՝ Ձեր համա-կիրների հետ:

Թղթակից

- **հտայահայ**
- **«Չատիկ» կենտրոն**
- **Վահէ Վարդանեան**
- **հարցազոյց**
- **իրանահայ,**
- **հտալիա**
- **Նորէլեան մրգանակ**

Հարակից Նյութեր



ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ - Հրանտ Նազարեանց. լուսաւոր քանաստեղծը (Շար. 4 եւ վերջ)

Ուղիղ երկու ամիս անց, 1913 թականի ապրիլի 24-ին, Բարիից գրած մի նամակում Հրանտ Նազարեանցը պատմում է իր մեկնումի ու անցած ճանապարհի մասին: Մինչեւ Բարի հասնելը՝ լինում է Յունաստանում («Գացի ծնրադրելու Հին Հելլադայի ակերակներուն առջեւ»), լինում է Կորֆու կղզում («անցայ Կորֆուի մենաւոր դղեակներուն մէջէն»), այցելում է Իտալիայի Բարի, Բոլոնիա, Միլան եւ այլ քաղաքներ:



ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ - Հրանտ Նազարեանց. լուսաւոր քանաստեղծը (Շար. 3)

Հրանտ Նազարեանցի այս տարիների քանաստեղծութիւնները ընդգծւածօրէն սիմուլիստական են: Երոպական գրականութեան մէջ սիմուլիզմը թեպէտեւ շարունակում էր տեւել, բայց ակնյայտօրէն արդէն տեղի էր տալիս գրական նոր մտածողութեան առաջ. Իտալիայում՝ Մարինետտին եւ ապագայապաշտ արւեստը՝ առհասարակ, Ֆրանսիայում՝ Գիոմ Ապոլիները, Անգլիայում՝ Էլիոթը... Դեռեւս չյստակւած ու չամբողջացած գրական հոսանքների հեռաւոր արձագանգը, այնուամենայնիւ, հասնում էր հայ գրականութեանը:



Իտալիայում յայտնաբերւել է Օրսոն Վելզի կորած համարող համր ֆիլմը

«Չափազանց շատ Ջոնսոն» համր ֆիլմը յայտնաբերւել է արկղում՝ Պորդենոնէ քաղաքում: «Այս ֆիլմը ցոյց է տալիս, որ Վելզն անելի երիտասարդ է, քան դուք կարծում էիք: Եւ պարզւում է, որ

արդեն 20 տարեկանում նա ցուցադրել է իր տաղանդը եւ բարձր վարպետութիւնը»,- ասել է արխիւի աշխատակիցը:



[ՄԵՐ ԱՐԺԷՔՆԵՐԸ - Յրանտ Նազարեանց. լուսաւոր քանաստեղծը \(Շար. 2\)](#)

Պոլսահայ գրական կեանքի վերելքի տարիներն են: Մեծարեցին հաշւած ամիսներ են մնացել ապրելու: Եղիա Տեմիրճիպաշեանին՝ Նոյնպէս: «Ներաշխարհը» արդէն գրած է: Գրիգոր Չոիրապը իր մեծ ընթացքի մէջ է, Ատոմ Եարճանեանը (Սիամանթօ) եւ Դանիէլ Վարուժանը իրենց մեծ վերելքի ճանապարհին են: Ռուբէն Չիլինկիրեանը դեռեւս ուսանող է Լօզանում: Եւ դեռ շատ-շատերը՝ գրողներ, քանաստեղծներ, թարգմանիչներ՝ Երանդ Օսեանից մինչեւ Թլկատինցի, Արտաշէս Յարութիւնեանից մինչեւ Գեղամ Բարսեղեան, Վահան Թեքեանից մինչեւ շատերը...



[ՄԵՐ ԱՐԺԷՔՆԵՐԸ - Յրանտ Նազարեանց. լուսաւոր քանաստեղծը \(Շար. 1\)](#)

Քսաներորդ դարի առաջին տասնամեակի հայ գրական մամուլի եւ զանազան հանդեսների ու պարբերականների էջերում սփռւած են բազմաթիւ ստեղծագործութիւններ ու թարգմանութիւններ, որոնք այսօր էլ արժանի են ճանաչւելու եւ կարդացւելու, մամուլի էջերում են մնացել տասնեակ հեղինակներ, որոնց արձակ կամ չափածոյ ստեղծագործութիւնները այսօր էլ արժանի են առանձին գրքով հրատարակւելու:

“Melograna” antico credo tra i popoli ariani

«ՆՈՒՂ»

(Հին արիացիների հաւատալիքների մէջ)

Նռնենին, որ բուսկան աշխարհի սիմուլն է, խորհրդանիշն է բնութեան խղճի, ինչպէս մայր Երկիրը: Նռնենին (նռան ծառը), որ միշտ կանաչ է եղել, հասկացւում էր իբրեւ հոգու յաւերժութեան գաղտնիքներից մէկը: Երբ բարի աղօթքներ էին կարդում սուրբ հիւսւածքեղէն կամ զգեստ հագած մանկան համար՝ նռան հատիկներ էին շաղ տալիս նրա վրայ: Այս կանաչ ծառը նախնական մարդու մօտ վերածել էր երկար կեանք նւիրաբերողի: Նրա հիւթը յաւերժութեան դեղ կամ յաւետ կեանքի շարունակումն է: Դա համարւում է սրբազան ծառերից: Կարողութիւն բերող յատկութիւն ունէր, «երիտասարդացնող» դեղի նման առաջարկւում էր տարեցներին, նոյնիսկ սիմուլն էր՝ անհամութեան:

Նուռը ամենասուրբ պտուղներից է ու յիշատակւում է նոյնիսկ Թորայի մէջ:

Յունական դիւցաբանութեան մէջ եւս նուռը պտղաբերութեան ու առատութեան սիմուլ է:

Արիացիները իրենց մեհեան-կրակարանների մօտ նռան ծառ էին տնկում: Նուռի մուգ գոյնը ներկայացնում է բուռն բերքութարիք եւ խորհրդանիշն է յղութեան՝ Անահիտ աստուածուհու:

Մուգ կանաչ գոյնի տերեւների ու նաեւ իր գոյնի, ձեւի եւ ծաղկի պատճառներով, որ նման է կրակարանի՝ մշտ եղել է պաշտամունքի առարկայ:

Նուռը նմանապէս խորհրդանշում է կնոջ կուրծքը, ծննդաբերութիւն ու սիմուլն է ուրախութեան:

Varand .

انار

(در باورهاي ملل كهن آريائي)



درخت انار كه مظهر جهان گياهي است، نماد رحم طبيعت است درست به سان ما در زمين. درخت انار را كه هميشه سبز بود چون رمزي از جاودا روح در نظر مي گرفتند، هنگاميكه دعاهاي خير را براي كودكي كه پيرا و رشته مقدس پوشيده است مي خواندند، دانه هاي انار بر او مي افشان اين درخت سبز نزد انسان اوليه به يك اعطا كننده طول عمر بدل شده . آن داروي جاودانگي يا تداوم زندگي جاويد است. آن در زمره درختان م است. تاثير نير و زائي داشت، آنرا همچون داروي جوان كننده براي سالخوردگان مي پنداشتند و حتي نماد ناميرائي بود . انار از مقدس ترين ميوه هاست، و حتي در تورات هم از آن ياد شده است.

در اساطير يونان نيز انار مظهر باروري و فراواني است. آريايها در نزديكي آتشكدهاي خود درخت انار مي كاشتند. پُردانگي نماينده برکت و باروري و نمادي است از باروري آناهيتا . به لحاظ رنگ سبز تند و برگهايش و نيز براي رنگ و شكل غنچه و گل كه شبیه آتشدان است، هميشه تقديس مي شده است. انار همچنين نماد سيد زن، زادن و توليد مثل بوده است. انار نماد شادي و زايش است. □

The pomegranate is the symbol of Armenia and represents fertility

The pomegranate is the symbol of Armenia and represents fertility, abundance and marriage. One ancient custom widely accepted in ancient Armenia was performed at weddings. A bride was given a pomegranate fruit, which she threw against a wall, breaking it into pieces. Scattered pomegranate seeds ensured the bride future children

Pomegranate was also the symbol of fertility in ancient Persian culture [citation needed] In Persian mythology, Isfandiyar eats a pomegranate and becomes invincible. In the Greco-Persian Wars, Herodotus mentions golden pomegranates adorning the spears of warriors in the phalanx. Even in today's Iran, pomegranate may imply love and fertility.

In Nowroz (haftseen) spread contains a pomegranate fruit with coins inserted as a symbol for prosperity, longevity and good health in the New Year . The pomegranate tree and its fruit have special significance in Zoroastrian rituals and ancient health practices

Pomegranates were known in Ancient Israel as the fruits which the scouts brought to Moses to demonstrate the fertility of the "promised land".The pomegranate appeared on the ancient coins of Judea.

Ancient Egyptians regarded the pomegranate as a symbol of prosperity and ambition

Although the pomegranate was mentioned in the Ancient Greek mythology, it is widespread use to decorate buildings, coins, clothing and more, many places named after it. Since the Greek mythology to modern Greece, the pomegranate symbolizes marriage, fertility, life and death. Hera, queen of Olympus, usually depicted holding a pomegranate in her hand, and often with a crown shaped as the pomegranate crown. In marriage ceremonies, when entering a new house, it is customary to throw a pomegranate on the floor as a talisman for good luck, abundance and [fertility](#).an archaic cultic image of Athena Nike, it is attested that the simple statue held a pomegranate in the right hand and a helmet in the left. The helmet undoubtedly refers to the "palladium" aspect. The pomegranate belongs to her as an attribute of mature womanhood. Even without reflecting on the mythological background, the meaning of this statue can be explicated: through it Athena is characterized as a guardian of human and vegetative fecundity.

Annette Melikian

L-A- 2 Sett 2013

l'immagine con la cartolina ed il primo annullo filatelico della storia delle poste italiane dedicato ad un personaggio armeno Hrand Nazariantz

vartanian 2009@gmail.com



Partecipano alla promozione della proposta :

- **Graziella Falconi, presidente**

dell'Associazione di amicizia Italo Armena- ZATIK

www.zatik.com / zatic@zatic.com

- **Loretta Caponi, presidente**

dell'associazione delle comunità straniere d'Italia- FORUM

<http://www.forumcomunitastraniere.it> / forumcom@hotmail.com

- Hanno contribuito per le ricerche :

Varand Sukias Curkjian. Poeta e giornalista armano dell'Iran

<http://varand.blogspot.com/>





Claudia Scelzo – Associazione Forum

Annette Melikian; Pubblicista . armena dell'Iran

Enrica Baldi, responsabile artistica e scientifica di "tenera mente - onlus"

Anahid Hovsepian

Anna Santoliquido , Pres. Mov. Int. " Donne e Poesia"

Comune di Casamassima proposta per il "Giardino di Melograni" "باغچه انار" صلح و دوستی برای شهر کازاماسیما Հարաբյակություններ Tehran - Iran - 10 / 08 / 2013		
offerta dai progettisti per la Pace e Amicizia :		
1	Dr. Arch- Vahè Massihi Vartanian	
2	Arch.tta Mehrnaz Vosoughi	
3	Arch. Alireza Farsayi	
4	Ing. Khashayar Azizi	

Partecipano alla promozione della proposta :

- **Graziella Falconi, presidente**

dell'Associazione di amicizia Italo Armena- ZATIK

www.zatik.com / zatic@zatic.com

- **Loretta Caponi, presidente**

dell'associazione delle comunità straniere d'Italia- FORUM

<http://www.forumcomunitastraniere.it> / forumcom@hotmail.com

- Hanno contribuito per le ricerche :

Varand Sukias Curkjian. Poeta e giornalista armeno dell'Iran

<http://varand.blogspot.com/>




Claudia Scelzo – Associazione Forum

Annette Melikian; Pubblicista . armena dell'Iran

Enrica Baldi, responsabile artistica e scientifica di "tenera mente - onlus"

Anahid Hovsepian

Anna Santoliquido , Pres. Mov. Int. " Donne e Poesia "

Comune di Casamassima proposta per il "Giardino di Melograni" "باغچه انار" . صلح و دوستی برای شهر کازاماسیما Երևի պարտեզ Tehran - Iran - 10 ր 06/ 2013		
offerta dai progettisti per la Pace e Amicizia :		
1	Dr. Arch- Vahè Massihi Vartanian	
2	Arch.tta Mehrnaz Vosoughi	
3	Arch. Alireza Farsayi	
4	Ing. Khashayar Azizi	